ԸՄԲՇԱՄԱՐՏ

# Պատանի մարզիկների տպավորիչ զոտեմարտերը



Անվանի զորավարների՝ Անդրանիկի, Հովհաննես Բաղրամյանի եւ նորօրյա հերոսներ, մարզադպրոցի նախկին սաներ Թաթուլ Կրպեյանի ու Հակոբ Գասպարյանի հիշատակներին նվիրված ազատ եւ հունահռոմեական ոճի ըմբշամարտի ավանդական դարձած մրցաշարերը մեծ շուքով են անցկացվում ըմբշամարտի օլիմպիական հերթափոխի հանրապետական մարզադպրոցում (ղեկավար՝ սպորտի վաստակավոր վարպետ, աշխարհի չեմպիոն եւ գավաթակիր Նորայր Մուսեղյան):

Օրերս անցկացվեց Խորհրդային Միության կրկնակի հերոս, մարշալ Հովհաննես Բաղրամյանին եւ ֆաշիզմի դեմ հաղթանակի 55-ամյակին նվիրված ազատ եւ հունահռոմեական ոճի ըմբշամարտի ավանդական՝ թվով 16-րդ միջազգային մրցաշարը:

Մրցումներին մասնակցեցին հանրապետության մարզերի, մարզական ընկերությունների, մարզադպրոցների 27 թիմերի, ինչպես նաեւ հարեւան Վրաստանի (Թբիլիսի, Բաթում, Գորի եւ Ջավախք) պատանի մարզիկներ՝ թվով շուրջ 400 հոգի: Պատանի ըմբիշներին ողջույնի խոսք ասացին արվեստի, սպորտի, մտավորականության ներկայացուցիչներ եւ պատերազմի վետերաններ, պատգամեցին սիրել հայրենիքը, ինչպես մարշալն էր սիրում եւ նվիրվել ժողովրդին անմնացորդ, ինչպես անցյալի բոլոր քաջերը, մասնավորապես քաջաց քաջերը՝ մարշալն ու զորավար Անդրանիկը:

Մրցագորգերի վրա իրենց լավ դրսեւորեցին հատկապես հարեւան երկրի պատանի ըմբիշները, ըմբշամարտի ՕՀՀԿՄ-ի, «Մալաթիա» մարզախմբի, «Դինամո» ընկերության մարզիկները: Ըստ քաշային կարգերի չեմպիոններ դարձան հետեւյալ ըմբիշները. ազատ ոճ- 32 կգ՝ Սուրեն Աղյան, 35 կգ՝ Վաչիկ Համբարձումյան (երկուսն էլ՝ «Մալաթիա»), 38 կգ՝ Դավիթ Բուկուրի, 42 կգ՝ Բեկա Չելիձե, 47 կգ՝ Կոբա Մակարաշվիլի, 53 կգ՝ Մալխազ Զարկուա, 59 կգ՝ Մամուկա Աբխաձե, 66 կգ՝ Գիա Չիխլաձե (բոլորը՝ Թբիլիսի), 73 կգ՝ Գեորգի Չորբենաձե, 85 կգ՝ Մարատի Ծիթելաձե (երկուսն էլ՝ Բաթում), հունահռոմեական ոճ- 32 կգ՝ Հովիկ Վարդանյան («Դինամո»), 35 կգ՝ Մաքսիմ Մանուկյան (Շահումյան թիվ 1 դպրոց), 38 կգ՝ Աբաս Զնդոյան, 42 կգ՝ Կնյազ Զնդոյան (երկուսն էլ՝ Էջմիածին, գ. Ապագա), 47 կգ՝ Արթուր Մկրտչյան («Հայաստան» ՄՄ), 53 կգ՝ Տիգրան Սահակյան (ԸՕՀՀՄ), 59 կգ՝ Հովիկ Խոցանյան («Դինամո»), 66 կգ՝ Հայկ Գրիգորյան (ԸՕՀՀՄ), 73 կգ՝ Հրաչ Հարությունյան (ՕՀՀՈւ), 85 կգ՝ Ավետիք Հովիկյան («Հայաստան» ՄՄ):

Առանձնապես տպավորիչ զոտեմարտեր վարեցին ազատ ոճայիններ Համբարձումյանը (35 կգ քաշային կարգ), Չելիձեն (42 կգ), Մակարաշվիլին (47 կգ), հունահռոմեական ոճի ըմբիշներ Զնդոյանը (42 կգ), Սահակյանը (53 կգ), Խոցանյանը (59 կգ), Գրիգորյանը (66 կգ):

ՖԵԴՅԱ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀՀ վաստակավոր մարզիչ

ՀՈԿԵՅ

## Պայքարը շատ լարված է

Սանկտ Պետերբուրգում ընթացող տափօղակով հոկեյի աշխարհի առաջնությունում անցկացվեցին քառորդ եզրափակիչ հանդիպումները: Բոլոր չորս խաղերն էլ անցան համառ ու անզիջում պայքարում: Սկանդինավցի հարեւանների՝ Շվեդիայի եւ Ֆինլանդիայի հավաքականների հանդիպումն ավարտվեց վերջինիս օգտին՝ 2-1: Աշխարհի չեմպիոն Չեխիայի ընտրանին մի կերպ հաղթեց Լատվիայի հավաքականին՝ 3-1: Կանադայի հավաքականը 5-3 հաշվով պարտության մատնեց Շվեյցարիայի հավաքականին, թեեւ վերջինս առջեւում էր 3-2 հաշվով: Եվ, վերջապես, Սլովակիայի հոկեյիստները փոքրիկ անակնկալ մատուցեցին՝ 4-1 հաշվով հաղթելով մինչ այդ պարտություն չունեցող ամերիկացիներին:

Այժմ կիսաեզրափակիչ խաղերում կհանդիպեն Չեխիա-Կանադա եւ Ֆինլանդիա-Սլովակիա զույգերը: Մայիսի 14-ին հաղթողները կվիճարկեն աշխարհի չեմպիոնի կոչումը, իսկ պարտվողները կմրցեն բրոնզե մեդալների համար:



## Գավաթի չորս հավակնորդ

Որոշվեցին Հոկեյի ազգային լիգայի (NHL) գլխավոր մրցանակի՝ Սթենլիի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ փուլի մասնակիցները:

Արեւելյան կոնֆերենցիայում կհանդիպեն «Ֆիլադելֆիան» եւ «Նյու Ջերսին», արեւմտյանում՝ ներկայիս գավաթակիր «Դալլասը» եւ «Կոլորադոն»: Եզրափակիչ կմտնեն 4 հաղթանակ տարած թիմերը:

## Եզրափակիչի մասնակիցները հայտնի են

Ավարտին է մոտեցել Իսրայելում անցկացվող Եվրոպայի մինչեւ 16 տարեկան պատանի ֆուտբոլիստների առաջնությունը:

Սկզբում առաջնության մասնակից 16 հավաքականները մրցեցին չորս խմբերում, ապա դրանցում առաջին եւ երկրորդ տեղեր գրավողները պայքարը շարունակեցին օլիմպիական մրցակարգով (պարտվողը դուրս է մնում):

Արդեն հայտնի են դարձել եզրափակիչ խաղի մասնակիցները. դրանք են Չեխիայի եւ Պորտուգալիայի պատանի ֆուտբոլիստները: Կիսաեզրափակիչներից մեկում չեխերը 2-1 հաշվով հաղթեցին հոլանդացիներին, նույն հաշվով պորտուգալացիները՝ հույներին: Այսպիսով, աշխարհամասի չեմպիոնի կոչման համար կպայքարեն Չեխիայի եւ Պորտուգալիայի, բրոնզե մեդալների համար՝ Հոլանդիայի եւ Հունաստանի հավաքականները:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՌԱԶՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ՄԿԱՆՎՈՐԴ




Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

**Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները**

**Հորիզոնական** 1. Անգլիա: 4. Հմայիլ: 8. Կողոպուտ: 10. «Ազդարար»: 11. Ութոտնուկ: 12. Երեքնուկ: 13. Իխ: 15. Առած: 17. Հերա: 18. Մորտա: 19. Ոլոռ: 21. Ցիան: 25. Մեխ: 28. Ակտինիա: 29. Ալերգիա: 30. Լոկատոր: 31. Դրակուլա: 32. Սենեկա: 33. Կահիրե:

**Ուղղահայաց** 1. Անկյուն: 2. Գողգոթա: 3. Իտալիա: 5. Մեդրեսե: 6. Յարանգա: 7. Լիրիկա: 9. Տնկի: 10. Արես: 14. Քերծե: 16. Ծառ: 17. Հագ: 19. Ոստիկան: 20. Ոնդատակ: 22. Իկեբանա: 23. Նեգրուհի: 24. Կարլոս: 25. Մայր: 26. Խանդ: 27. Կաբարե:

